ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

11 ապրիլ 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Զարինե Ղամբարյանը, Հասմիկ Վարդանյանը, Նարեկ Ալիխանյանը, Սուրեն Մելիքյանը, Արմենուհի Մաիլյանը, Սարգիս Սահակյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Ադամ Սարգսյան, Աշխեն Ամիրխանյան, Ալեքսանդր Հարությունյան, Հովհաննես Նաղդալյան, Գեվորգ Ամիրխանյան, Մարինե Սահակյան, Արմինե Աղաջանյան, Լիպարիտ Սանթրոսյան

<u>Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈԲԵՐՏ ՉԱՊՈՒԽՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 22/8 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 54.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 1-ին փողոց թիվ 36/1 հասցեի ավտոտնակը, անասնաշենքը և վերջիններիս զբաղեցրած 200.5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/11 հասցեի մառանը և վերջինիս զբաղեցրած 106.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 185/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17.6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
6. Դիլիջան համայնքի 2025թ.բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
7. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 74/3 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
8. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան
9. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 20/1 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 15.3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. Դիլիջան համայնքի վարչական տարածքում գտնվող Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող հենասյուները գովազդային վահանակներ տեղադրելու նպատակով վարձակալությամբ տրամադրելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում կրթահամալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքում ամֆիթատրոնի, հանգստի և հյուրանոցային գոտու գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
14. Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ղեկավարն առաջարկեց օրակարգում ավելացնել ևս 2 հարց.

1. Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում կրթահամալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. . Դիլիջան համայնքում ամֆիթատրոնի, հանգստի և հյուրանոցային գոտու գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ավագանին (կողմ-15 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը և հաստատեց օրակարգը նոր խմբագրությամբ:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 909-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 26, երկու սենյականոց բնակարանը, ուղղակի վաճառքի միջոցով, վարձակալ Դավիթ Ռուբենի Շեկոյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 26, երկու սենյականոց՝ 39,7ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Դավիթ Ռուբենի Շեկոյանի ընտանիքին, ուղղակի վաճառքի միջոցով, 59550 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 910-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 22/8 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՉԲԱՂԵՑՐԱԾ 54. 7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. փետրվարի 28-ի թիվ 193-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/8 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գուրգեն Նասլեթի Ղազարյանի կողմից ինքնակամ կառուցված 40.6585քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 13032025-11-0009/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գուրգեն Ղազարյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/8 հասցեի ավտոտնակը՝ 40.6585քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 54.7քմ հողամասը, համապատասխանաբար, 94166 դրամ և 373837 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 54.7քմ հողամասը քաղ. Գուրգեն Նասլեթի Ղազարյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/8 հասցեի ավտոտնակը՝ 40.6585քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 54.7քմ հողամասը, համապատասխանաբար, 94166 դրամ և 373837 դրամ արժեքներով քաղ. Գուրգեն Նասլեթի Ղազարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 911-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 200.5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 09-ի թիվ 1291-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 1-ին փողոց, թիվ 36/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արտուշ Արշալույսի Հովսեփյանի կողմից ինքնակամ կառուցված 37.17քմ արտաքին մակերեսով ավտոտնակի և 111.78քմ արտաքին մակերեսով անասնաշենքի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 21032025-11-0034/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արտուշ Հովսեփյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 1-ին փողոց, թիվ 36/1 հասցեի ավտոտնակը՝ 37.17քմ

արտաքին մակերեսով, անասնաշենքը՝ 111.78քմ արտաքին մակերեսով և վերջիններիս զբաղեցրած 200.5քմ հողամասը, համապատասխանաբար, 86086 դրամ, 517765 դրամ և 1370278 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը, անասնաշենքը և վերջիններիս զբաղեցրած 200.5քմ հողամասը քաղ. Արտուշ Արշալույսի Հովսեփյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 1-ին փողոց, թիվ 36/1 հասցեի ավտոտնակը 37.17քմ արտաքին մակերեսով, անասնաշենքը 111.78քմ արտաքին մակերեսով և վերջիններիս զբաղեցրած 200.5քմ հողամասը, համապատասխանաբար, 86086 դրամ, 517765 դրամ և 1370278 դրամ արժեքներով քաղ. Արտուշ Արշալույսի Հովսեփյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 912-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 73/11 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 106.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. մարտի 06-ի թիվ 221-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց, թիվ 73/11 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Հռիփսիմե Վարդգեսի Այվազյանի կողմից ինքնակամ կառուցված 53.92քմ արտաքին մակերեսով մառանի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 17032025-11-0044/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Հռիփսիմե Այվազյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց, թիվ 73/11 հասցեի մառանը՝ 53.92քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 106.0քմ հողամասը, համապատասխանաբար, 249758 դրամ և 724436 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված մառանը և վերջինիս զբաղեցրած 106.0քմ հողամասը քաղ. Հռիփսիմե Վարդգեսի Այվազյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց, թիվ 73/11 հասցեի մառանը՝ 53. 92քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 106. 0քմ հողամասը, համապատասխանաբար, 249758 դրամ և 724436 դրամ արժեքներով քաղ. Հռիփսիմե Վարդգեսի Այվազյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 913-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 185/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 17.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի թիվ 109-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/10 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գոհար Պավլիկի Գուլանյանի կողմից ինքնակամ կառուցված 26. 0քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 26032025-11-0034/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գոհար Գուլանյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/10 հասցեի ավտոտնակը՝ 26. 0քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 70850 դրամ և 185043 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17. 6քմ հողամասը քաղ. Գոհար Պավլիկի Գուլանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/10 հասցեի ավտոտնակը՝ 26. 0քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 70850 դրամ և 185043 դրամ արժեքներով քաղ. Գոհար Պավլիկի Գուլանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 914-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ՝ Դիլիջան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ հատկացնել «Դիլիջանի մարզահամալիր» ՀՈԱԿ-ին /«09-05-01» Արտադպրոցական դաստիարակություն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4511 հոդված/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 915-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 74/3 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 25. 4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. մարտի 05-ի թիվ 220-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց, թիվ 74/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Ասյա Գագիկի Ալիխանյանի կողմից ինքնակամ կառուցված 25. 4քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 17032025-11-0049/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Ասյա Ալիխանյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց, թիվ 74/3 հասցեի ավտոտնակը՝ 25. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 25. 4քմ հողամասը,

համապատասխանաբար, 69215 դրամ և 267051 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25. 4քմ հողամասը քաղ. Ասյա Գագիկի Ալիխանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց, թիվ 74/3 հասցեի ավտոտնակը՝ 25. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 25. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 69215 դրամ և 267051 դրամ արժեքներով քաղ. Ասյա Գագիկի Ալիխանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 916-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Համաձայն ՀՀ կառավարության 27.12.2024թ. թիվ 2060-Ն որոշման, Դիլիջան համայնքի և Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև 25. 03.2025թ. կնքված թիվ ՏԿԴ-2025 պայմանագրի, Դիլիջան համայնքին հատկացվել է 343 200 (երեք հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր/ներառյալ հարկերը/) ՀՀ դրամ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի տարակարգի շնորհում ստացած աշխատակցին պետական բյուջեի միջոցների հաշվին հավելավճար տրամադրելու համար: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է վերը նշված գումարը ճանաչել եկամուտ և ծախս:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 343 200 (երեք հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 343 200 (երեք հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս՝ «09-01-01»

Դիլիջան համայնք /Նախադպրոցական կրթություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի՝ 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ հոդվածով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 917-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Համաձայն ՀՀ կառավարության 15.07.2021թ. թիվ 1169-Ն որոշման, Դիլիջան համայնքի և Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև 27.03.2025թ. կնքված թիվ Դ-ԴՄ-2025 պայմանագրի, Դիլիջան համայնքին հատկացվել է 20 643 000 (քսան միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ՝ 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման նպատակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 20 643 000 (քսան միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 20 643 000 (քսան միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս՝ Դիլիջան համայնք /Նախադպրոցական կրթություն/ «09-01-01» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի՝ 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 918-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/1 ՀԱՍՑԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 15. 3ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. փետրվարի 13-ի թիվ 111-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 20/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Աշոտ Անդրանիկի Սողոմոնյանի կողմից ինքնակամ կառուցված 10. 56քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 07032025-11-0008/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Աշոտ Սողոմոնյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 20/1 հասցեի տնտեսական շինությունը՝ 10. 56քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 15. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 48914 դրամ և 104565 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 15. 3քմ հողամասը քաղ. Աշոտ Անդրանիկի Սողոմոնյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 20/1 հասցեի տնտեսական շինությունը՝ 10. 56քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 15. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 48914 դրամ և 104565 դրամ արժեքներով քաղ. Աշոտ Անդրանիկի Սողոմոնյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 919-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Դիլիջան համայնքի վարչական տարածքում գտնվող Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող հենասյուները տրամադրել վարձակալության իրավունքով գովազդային վահանակներ տեղադրելու նպատակով՝ 1 հենասյան համար սահմանել ամսական 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

2. Վարձակալության առավելագույն ժամկետ սահմանել՝ 5 տարի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 920-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում կրթահամալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 921-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻ, ՀԱՆԳՍՏԻ և ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքում ամֆիթատրոնի, հանգստի և հյուրանոցային կրթահամալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 922-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի մայիսի 7-ին, ժամը 17-00-ին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 923-Ա)*

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԲՈՋԻԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____